

Իբուֆեն 100 մգ/5մլ

ԴեղԱԶԵՎ. Ներքին ընդունման մանկական դեղակախույթ՝ նարնջի համով:

ԲԱՂԱԴԻՈՒԹՅՈՒՆ. Յուրաքանչյուր 5 մլ պարունակում է 100 մգ իբուպրոֆեն ազդող նյութ:

Օժանդակ նյութեր՝ պրոպիլեն գլիկոլ, գլիցերին, մերիլպարաբեն, պրոպիլպարաբեն, սախարոզ դեղին, հեղուկ սորբիտ, պոլիսորբատ 80, նարնջի համային հավելում, սախարոզ, աէրոսիլ 200, ֆսանտան, մաքրված ջուր:

Դեղաբանական խումբ. Ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր:

Ֆարմակոդինամիկա

Իբուպրոֆենը ինհիբացիոն է պրոստագլանդինների սինթեզը ցիկլօօքսիգենազա ֆերմենտի ակտիվության նվազեցման հաշվին, ինչը հանգեցնում է պրոստագլանդինի պրեկուրսորների ձևավորման նվազեցմանը: Իբուպրոֆենը ցուցաբերում է ցավազրկող և ջերմիջեցնող ազդեցություն, ունի անոթաբարձր (ներառյալ յուրեղի ունևատարմանը հոդաբորբ կամ Սթրիկ հիվանդություն), անկլիվիզացնող սպոնդիլիտի, օսթեոարթրիտի և այլ ոչ ունևատրի (սերոնեգատիվ) արթոպաթիաների բուժման ժամանակ: Ոչ անոթային ունևատրի հիվանդությունների բուժման ժամանակ իբուպրոֆենը ցուցված է որոշակի դեպքերում, ինչպիսիք են մրսեցրած ուս (կապսուլիտ), բուրսիտ, տենդիլիտ, տենոսինովիտ և ողնաշարի ցավեր: Իբուպրոֆենը կարող է օգտագործվել նաև վափուկ մկանների վնասվածքների դեպքում, օրինակ հյուսվածքների լարվածություն և դեֆորմացիա: Իբուպրոֆենի ցավազրկող ազդեցությունը կիրառվում է չափավոր ցավերի, օրինակ դիսմենորիայի, ատամի և հետվիրահատական ցավերի և գլխացավերի թեթևացման ժամանակ, ներառյալ միգրենի ցավերի: Իբուպրոֆենը ցուցված է նաև որպես ջերմիջեցնող, հասկապես երեխաների համար:

Ֆարմակոդինետիկա

Իբուպրոֆենը ներծծվում է ստամոքս-աղիքային տրակտից և մաքսիմում կոնցենտրացիան արյան պլազմայում առաջանում է ընդունումից 1-2 ժամ հետո: Իբուպրոֆենը 90-99% կապված է պլազմայի սպիտակուցների հետ և պլազմայում կիսատրոհման ժամանակը կազմում է 2 ժամ: Արագ արտազատվում է մեզոլ հիմնականում մետաբոլիտների և կոնյուգատների ձևով: Մոտավոր 1 % արտազատվում է մեզոլ, չձևափոխված իբուպրոֆենի ձևով և մոտավոր 14 % կոնյուգացված իբուպրոֆենի ձևով: Կրճի կարծիքով կարող է հայտնաբերվել անհասանելի ֆանակներով:

Կիրառման ցուցումներ

Իբուֆեն դեղակախույթ ցուցված է կիրառել 6 ամսականից 12 տարեկան երեխաներին, իսկ 3-6 ամսական երեխաներին՝ միայն բժշկի ցուցումով՝ հաշվի առնելով երեխայի մարմնի քաշը՝ 5 կգ-ից ոչ պակաս:

- Որպես ջերմիջեցնող՝ սուր շնչառական հիվանդությունների, գրիպի, մանկական վարակների ժամանակ, հետադարձադարձային շնչառում և տարբեր հիվանդությունների ժամանակ, որոնք ուղեկցվում են ջերմության բարձրացումով,

- Որպես ցավազրկող՝ բուլ և չափավոր ցավի ժամանակ, օր.՝ ատամների ծկլթում, գլխացավ, ատամնացավ, ականջացավ, կոկորդի ցավ, տարբեր տիպի տրավմատիկ և հետվիրահատական շնչառի ցավեր, ճակատաքիտների և միգրեն,

- Որպես հակաբորբոքային՝ յուրեղի ունևատարմանը հոդաբորբ, ոսկրահոդաբորբ, ջլաբորբ, տենդովազիլիտ:

Հակացուցումներ

- Մինչև 3 ամսական փոքրիկներ

- Նախկինում իբուպրոֆենի և այլ ոչ ստերոիդալ հակաբորբոքային դեղերի հանդեպ ունեցած զգայունություն
- Բրոնխիալ ասթմա, եղջջացան
- Երեխայի մոտ ստամոքսաղիքային համակարգի խոցային ախտահարման դեպքում
- Ստամոքսաղիքային համակարգի արյունահոսություն
- Աղիների բորբոքային հիվանդություններ
- Արյան հիվանդություններ՝ լեյկոպենիա, հեմոֆիլիա
- Լյարդային կամ երիկամային անբավարարություն
- Հղիության երբորդ եռամսյակ

Կողմնակի երևույթներ

Դեղորայքի օգտագործման ժամանակ հնարավոր են հետևյալ կողմնակի երևույթները.

- Ստամոքսաղիքային համակարգի կողմից՝ սրտխառնոց, փսխում, ախորժակի բացակայություն, փորլուծություն, դիսպեպտիկ երևույթներ, պեպտիկ խոց, հազվադեպ հնարավոր է ստամոքսաղիքային արյունահոսություն,
- Ալերգիկ ռեակցիաներ՝ մաշկային ցանավորում, բուրբուխ, եղջջացան, բրոնխիալ ասթմայի սրացում, բրոնխոսպազմ, անաֆիլակտիկ ռեակցիաներ, հազվադեպ ծայրամասային այտուց
- Սիրտ-անոթային համակարգի կողմից՝ զարկերակային ճնշման բարձրացում, սրտխփոց,
- Նյարդային համակարգի կողմից՝ գլխապտույտ, գլխացավ, գրգռվածություն,
- Արյան պատկեր՝ նեյտրոպենիա, թրոմբոցիտոպենիա, ագրանուլոցիտոզ, ալաաստիկ անեմիա:

Հղիություն և կրծքով կերակրում

Հղիություն: Տերատոգեն ազդեցություն: **C** մակարդակի հղիություն:

Ռեպրոդուկտիվ հետազոտությունները, անցկացրած առնետների և հագարների վրա, չեն ցուցաբերել անոմալ զարգացման նշաններ: Այնուամենայնիվ կենդանիների ինֆնավերարտադրման հետազոտությունները միշտ չեն կանխորոշում մարդկանց ռեակցիան: Գոյություն չունեն աղեկվառ և լավ վերահսկվող հետազոտություններ հղի կանանց մոտ: Հղիության ընթացքում իբուպրոֆենը կարելի է կիրառել, միայն եթե պոտենցիալ օգուտները արդարացնում են պոտենցիալ ռիսկերը պտղի վրա:

Ոչ տերատոգեն ազդեցություն:

Պտղի սիրտ-անոթային համակարգի վրա ՈՍՀԲԴ-ի ունեցած հայտնի ազդեցությունից էլնելով, պետք է խուսափել օգտագործումը խղիության ուժ փուլերում:

Լակտացիա:

Հայտնի չէ, արդյոք դեղը անցնում է օրգանիզմից մայրական կաթի մեջ: Քանի որ, շատ դեղեր ներթափանցում են կրծքի կաթի մեջ և առկա է իբուպրոֆենից լուրջ կողմնակի ազդեցությունների առաջացման պոտենցիալ կրծքի երեխաների մոտ, պետք է որոշում ընդունել անհրաժեշտ է դադարեցնել կրծքով կերակրումը, թե դեղի ընդունումը՝ հաշվի առնելով դեղի կարևորությունը մոր համար:

Նախագրուցումներ

Խորհրդակցե՛ք բժշկի հետ օգտագործելուց առաջ, եթե երեխան ունի

- Խոց
- Արյունահոսության հետ կապված խնդիրներ
- Ստամոքսի խնդիրներ, որոնք պահպանվում կամ վերադառնում են, օրինակ այրոց, ստամոքսի խանգարում կամ ցավ
- Արյան բարձր ճնշում, սրտի կամ երիկամների հիվանդություն կամ միզամուղների ընդունում
- Եթե հեղուկներ չե՛ք խմել
- Մեծ ֆանակությամբ հեղուկի կորուստ, շարունակվող փսխոցի կամ փորլուծության պատճառով
- Խնդիրներ կամ լուրջ կողմնակի ազդեցություններ, կապված ջերմիջեցնողների կամ ցավազրկողների օգտագործման հետ

Հարցրե՛ք բժշկին կամ դեղագետին օգտագործելուց առաջ, եթե երեխան

- Բժշկի հսկողության տակ է ցանկացած լուրջ հիվանդության պատճառով
- Հակահոգեւորաբանական համար (արյան ճարձգում) դեղատոմսով դուրս գրվող դեղերի ընդունում
- Ընդունում է ցանկացած այլ դեղ
- Օգտագործում է ցանկացած այլ դեղ, որը պարունակում է իբուպրոֆեն կամ ցանկացած այլ ցավազրկող/ջերմիջեցնող միջոց

Ստամոքսի խանգարման դեպքում, դեղը սալ սննդով կամ կարով: Ընդունումը դադարեցնել և հարցնել բժշկին, եթե՝

- Առաջանում են ալերգիկ ռեակցիաներ: Անմիջապես դիմե՛ք բժշկական օգնության
- Տենդը և ցավերը երկարաձգվում են 3 օրից ավել
- Երեխայի մոտ չի նկատվում թթվաքրտնազեղում առաջին օրվա (24 ժամ) բուժման ընթացքում
- Ստամոքսի ցավը կամ խանգարումը ուժեղանում է կամ շարունակվում է
- Հիվանդը հատվածում կարմրության կամ հոտի առկայություն
- Առաջանում են նոր ախտանշաններ

Պահել երեխաների համար անհասանելի վայրում: Գերդոզավորման դեպքում դիմել բժշկական օգնության

Նախագրուցումներ:

Ալերգիայի նախագրուցում: Իբուպրոֆենը կարող է առաջացնել լուրջ ալերգիկ ռեակցիաներ, որը կարող է ներառել:

- Եղջերացան, ասթմա (ճնշահեղձություն)
- Ցնցում, դեմֆի ախտոցվածություն

Ստամոքսի արյունահոսության նախագրուցում:

Օգտագործումը ավելի քան խորհուրդ է տրվում, կարող է առաջացնել ստամոքսի արյունահոսություն:

Կոկորդի ցավի նախագրուցում:

Ուժեղ կամ շարունակական կոկորդի ցավ կամ անզինա, որն ուղեկցվում է բարձր ջերմությունով, գլխացավով, փսխումով կամ սրտխառնոցով, կարող են լուրջ լինել: Խորհրդակցե՛ք բժշկի հետ: Ցավի դեպքում չօգտագործել 10 օրից ոչ ավել, տենդի դեպքում 3 օրց ոչ ավել: Չօգտագործել 2 օրից ոչ ավել և չնւնակել 3 տարեկանից փոքր երեխաներին առանց բժշկի հետ խորհրդակցության: Չօգտագործել, եթե երեխայի մոտ երբևէ նկատվել է ալերգիկ ռեակցիաներ, ցանկացած այլ ջերմիջեցնող դեղի նկատմամբ:

Հատկապես կարևոր է չօգտագործել հղիության վերջին ամիսներին, բացառությամբ երբ նշանակված է բժշկի կողմից, քանի որ դա կարող է առաջացնել խնդիրներ նորածին երեխաների մոտ կամ բարդություններ ծննդաբերության ընթացքում:

Կիրառման ձև և դեղաչափում

Դեղաչափումը կախված է երեխայի տարիքից և մարմնի քաշից: Իբուֆենի միանվագ դեղաչափը կազմում է 5-10 մգ/կգ քաշին, օրական առավելագույն դեղաչափը կազմում է 30 մգ/կգ քաշին: Իբուֆենը 24 ժամվա ընթացքում կարելի է տալ 3-4 անգամ: Դեղի ազդեցությունը պահպանվում է մինչև 8 ժամ

Տարիք	Միջին քաշ	Միանվագ դեղաչափը	Օրական առավելագույն դեղաչափը
3-6 ամսական		Բժշկի գուցումով	
6 ամսականից 1 տարեկան	7-10 կգ	2.5 մլ (50 մգ)	200 մգ
1-3 տարեկան	10-16 կգ	2.5-5 մլ (50-100 մգ)	300 մգ

4-6 տարեկան	18-22 կգ	7.5 մլ (150 մգ)	450 մգ
7-9 տարեկան	24-28 կգ	10 մլ (200 մգ)	600 մգ
10-12 տարեկան	30-36 կգ	15 մլ (300 մգ)	900 մգ

- Որպես ցավազրկող կիրառել 5 օրից ոչ ավել
- Որպես ջերմիջեցնող՝ 3 օրից ոչ ավելի

Թողարկման ձև

100 մլ շեփկ չափիչ բաժակով:

Պահպանման պայմաններ

Պահել երեխաների համար անհասանելի վայրում: Պահպանել 25°C ոչ բարձր ջերմաստիճանում:

Պիտանիության ժամկետ

3 տարի: Օգտագործել բացելուց հետո 6 ամսվա ընթացքում:

Բացթողման կարգ

Առանց դեղատոմսի: